



**Ամուլսարի Ոսկու Հանքի Ծրագրի  
Բնապահպանական և սոցիալական  
կառավարման պլան (ԲՄԿՊ)**

**Ծրագրի զբաղեցրած տարածքի  
կառավարման պլան**

Տարբերակ 3  
Մարտ, 2018թ.

**Վերանայված տարբերակներ**

<b>Տարբերակ</b>	<b>Ամսաթիվ</b>	<b>Մանրամասներ</b>	<b>Կազմել է</b>
V1	Փետրվար 2016թ.	ԲՄԱԳ-ի 10-րդ տարբերակի նախագիծ	Ալան Բլեքմոր
V2	Հունիս 2016թ.	Խորհրդակցությունների ուսումնասիրությունների հիմնված թարմացում <span style="float: right;">և վրա</span>	ՈւԱԻ
V3	Մարտ 2018թ.	Փոխվել է ձևաչափը և վերանյվել	Ալան Բլեքմոր

**Հաստատումներ**


<b>Կազմեց՝</b>	<b>Ստուգեց՝</b>	<b>Հաստատեց՝</b>


## **Բովանդակություն**

<b>1</b>	<b>ներածություն</b> .....	<b>1</b>	
1.1	նպատակը.....	1	
1.2	գործառույթներն ու պատասխանատվության ոլորտը.....	1	
<b>2</b>	<b>գործունեության շրջանակը, նախապատմություն ԵՎ համատեքստ</b> ...	<b>2</b>	
<b>3</b>	<b>պահանջներ</b> .....	<b>2</b>	
Լիդիան ընկերությունը կապահովի, որպեսզի որակավորված լանդշաֆտային ճարտարագետը պարտադիր այցելություններ կատարի Ծրագրի տարածք համապատասխան կանոնավոր ընդմիջումներով, ըստ համաձայնեցված ժամանակացույցի, իսկ լանդշաֆտային/ բնապահպանական աշխատանքների պատասխանատուն այցելի տեղամաս ներքոնշյալ աշխատանքների իրականացման ընթացքում. ....			6
•	Պահպանելու կամ հեռացնելու ենթակա բուսականության որոշում .....	6	
•	Բուսահողի վերին շերտի հեռացում.....	6	
•	Հողային աշխատանքներ և ռելիեֆի հավասարեցում .....	6	
•	Պահուստային մակերեսների ջարդում.....	6	
•	Ենթահողի կտրում .....	6	
•	Հողի տարածում.....	6	
•	Հողի մշակում .....	6	
•	Հողի նախապատրաստում ցանքի և տունկի նպատակով և .....	6	
Արտաքին խառնաշփոթը կնվազի, եթե Ծրագրի բաղադրիչները ներփակված լինեն պարզ շինությունների մեջ, որոնք հնարավորինս համապատասխանում են տեղանքի ռելիեֆին: .....			13

## **Հապավումներ**

ՕՈՎԿՊ	Օդի որակի, աղմուկի և վիբրացիայի կառավարման պլան
ԹՄԴԿՊ	Թթվային ապարների դրենաժի կառավարման պլան
ԿԿՊ	Կենսաբազմազանության կառավարման պլան
ԴԱԼ	Դատարկ ապարների լցակույտ
ՄԺԿՊ	Մշակութային ժառանգության կառավարման պլան
ԲՄՊ	Բնապահպանական մոնիթորինգի պլան
ԲՄԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատում
ԲՄԿՊ	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան
ԲՄԿՀ	Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգ
ԿՏՀ	Կույտային տարրավիճման հրապարակ
Լիդիան	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ
ԿՊ	Կառավարման պլան
ՀՀ	Հայաստանի հանրապետություն
ԱՍԸ	Աշխատանքների ստանդարտ ընթացակարգ
ՄՋԿՊ	Մակերևութային ջրերի կառավարման պլան
ՏԿՊ	Տրանսպորտի կառավարման պլան

	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՄԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՀՀ, ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ	Լիդիանի փաստաթուղթ #	0-00-PLN-ENV-82110	
		Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան	
Ամսաթիվ՝ մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան	Տարբերակ #	Տարբերակ <b>3</b>	Էջ i

	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՍԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՀՀ, ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ	Լիդիանի փաստաթուղթ #	0-00-PLN-ENV-82110	
		Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան	
Ամսաթիվ՝ մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան	Տարբերակ #	Տարբերակ 3	Էջ 1

## 1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի զբաղեցրած տարածքի պլանը Լիդիան Բնթերնեյշնլ ընկերության Հայաստանյան դուստր ընկերություն հանդիսացող «Լիդիան Արմենիա» ՓԲԸ (այսուհետ՝ Լիդիան) կողմից իրականացվող Ամուլսարի Ոսկու Հանքի Ծրագրի Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի (ԲՄԿՊ) մաս է կազմում: ԲՄԿՊ-ը իրականացվում է Ծրագրի Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի (ԲՄԿՀ) միջոցով, որը մշակվել է Ծրագրի բնապահպանական և սոցիալական ասպեկտները կառավարելու նպատակով:


Ծրագրին, դրա բնապահպանական և սոցիալական չափանիշներին, ինչպես նաև ԲՄԿՀ վերաբերյալ ընդհանուր տեղեկություններին ծանոթանալու համար խորհուրդ է տրվում ընթերցել ԲՄԿՀ Ձեռնարկը (**0-00-MAN-ENV-82043 ESMS Manual**):

### 1.1 ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման այս պլանը (ՁՏԿՊ) կազմվել է սահմանելու, թե ինչպես է Ծրագրի ֆիզիկական զբաղեցրած տարածքը կառավարվելու հանքի շինարարության և շահագործման ընթացքում: Սույն պլանը վերաբերում է Ծրագրի բոլոր ասպեկտներին, ներառյալ հողի ժամանակավոր կամ մշտական ձեռքբերումը: Զբաղեցրած տարածքի կառավարման պլանը ներկայացնում է կառավարման ընթացակարգերն ու Ծրագրի ՇՄԱԳ-ում և ԲՄԱԳ-ում ներառված համապատասխան մեղմացման միջոցառումների կիրառումը: Նշենք, որ Ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվել է պետական թույլտվություններ ստանալու նպատակով, իս ԲՄԱԳ-ն իրականացվել է ՄՖԿ ԿՍ և ՎՁԵԲ ԿՊ-ում ներառված միջազգային չափանիշներին համապատասխանելու նպատակով:

### 1.2 ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՄԻԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

Ծրագրի բոլոր աշխատակիցների պարտականությունն է վերահսկել Ծրագրի զբաղեցրած տարածքը: Գործառույթներին և պատասխանատվության ոլորտին մանրամասն ծանոթանալու համար խորհուրդ է տրվում ընթերցել ԲՄԿՀ Ձեռնարկը (**0-00-MAN-ENV-82043 ESMS Manual**):

	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՍԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՀՀ, ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ	Լիդիանի փաստաթուղթ #	0-00-PLN-ENV-82110	
		Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան	
Ամսաթիվ՝ մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան	Տարբերակ #	Տարբերակ 3	Էջ 2

## 2 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ, ՆԱԽԱՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՔՍ

Զբաղեցրած տարածքի կառավարման պահանջները տարածվում են Ծրագրի շինարարության, շահագործման և փակման ընթացքում իրականացվող բոլոր գործողությունների վրա: Սույն ՁՏԿՊ-ում սահմանվող «զբաղեցրած տարածքը» վերաբերում է Ծրագրի հանգույցների և ենթակառուցվածքների զբաղեցրած ֆիզիկական տարածքը, ինչպես նաև դրանց սահմաններում և դրանց շրջակայքում տեղի ունեցող գործողությունները: Այն վերաբերում է ոչ միայն հենց հողի վրա ազդեցություններին, բայց նաև այլ միջավայրերին, ներառյալ՝ օդ և ջուր: Ուստի առկա է այլ կառավարման պլանների հետ համընկում, այդ թվում՝

- Օդի որակի, աղմուկի և վիբրացիայի կառավարման պլան (ՕՈԱՎԿՊ),
- Մշակութային ժառանգության կառավարման պլան (ՄԺԿՊ),
- Կենսաբազմազանության կառավարման պլան (ԿԿՊ),
- Մակերևութային ջրերի կառավարման պլան (ՄՋԿՊ),
- Տրանսպորտի կառավարման պլան (ՏԿՊ), և
- Հանքի ռեկուլտիվացիայի, փակման և վերականգնման նախնական պլան (ՀՌՓՎՆՊ):

Վերոնշյալ փաստաթղթերի վերջին թարմացված տարբերակների համարներին ծանոթանալու համար տե՛ս ԲՄԿՀ Ձեռնարկը (0-00-MAN-ENV-82043 ESMS Manual ):

Սույն պլանն անդրադառնում է հողի խախտումը և հողատարածքի զբաղեցումը նվազագույնի հասցնելու և վերահսկելու, հանգույցների և սարքավորումների տեղադրումը և ավտոմեքենաների երթևեկությունը կազմակերպելու, հողը տեղափոխելու և ջրահոսքերը կառավարելու և էրոզիան վերահսկելու պահանջներին: Այն ներկայացնում է նաև անմիջապես զբաղեցրած տարածքի հետ կապված փոշու, աղմուկի, վիբրուսի և կենսաբազմազանության վրա ազդեցությունները:

Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլանը չի անդրադառնում Ծրագրի «ածխածնի հետքին» (տվյալ ասպեկտին առավել մանրամասն ծանոթացե՛ք Ածխածնի և էներգիայի կառավարման պլանում (ԱԷԿՊ)):


## 3 ՊԱՀԱՆՁՆԵՐ

ԲՄԱԳ-ը ներկայացնում է Ծրագրի զբաղեցրած տարածքը, ներառյալ՝ հանքափոսերի կոնտուրները, մշակման տարածքները, ենթակառուցվածքների միջացնները և հանքատար ու մերձատար ճանապարհները: Զբաղեցրած տարածքը հստակ կներկայացվի Ծրագրի տեղամասերի գծագրերի վրա և պատշաճ կերպով կսահմանազատվի տեղամասում: Ծրագրի զբաղեցրած տարածքի սահմաններից դուրս տարածքներ մտնելը կարգելվի, բացառությամբ այն դեպքերի, եթե դա արտոնված է սույն ՁՏԿՊ-ում սահմանված ընթացակարգերով:

ՁՏԿՊ-ն իրականացնելու համար նախնական գործիք է հանդիսանում Հողի մաքրման թույլտվության Ստանդարտ աշխատանքային ընթացակարգը (ՍԱԸ): Հողի վրա ոչ մի աշխատանք կամ հողի մաքրում չի թույլատրվի իրականացնել առանց նշված ընթացակարգն ապահովելու:

Լրացուցիչ մի քանի ընթացակարգեր ևս կարևոր են ՁՏԿՊ-ի իրականացման համար, այդ թվում՝

- Բուսածածկի և հողի բերրի շերտի հեռացմանը վերաբերող ՍԱԸ (0-00-PRO-ENV-82080),

	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՍԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՀՀ, ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ	Լիդիանի փաստաթուղթ#	0-00-PLN-ENV-82110	
		Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան	
Ամսաթիվ՝ մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան	Տարբերակ #	Տարբերակ 3	Էջ 3

- Էրոզիայի և նստվածքների վերահսկման ՍԱԸ (0-00-PRO-ENV-82137),
- Կանխարգելիչ տեխնիկական սպասարկման ՍԱԸ (0-00-PRO-ENV-82079),
- Օդի որակի կառավարման վերաբերյալ ՍԱԸ (0-00-PRO-ENV-82132),
- Աղմուկի մակարդակի կառավարման ՍԱԸ (0-00-PRO-ENV-82133),
- Վտանգավոր նյութերի պահեստավորման և օգտագործման համար սահմանված բնապահպանական պահանջներ (0-00-PRO-ENV-82013),
- Թափոնների կառավարման վերաբերյալ ՍԱԸ (0-00-PRO-ENV-82081),
- Ածխաջրածնի թափվածքների վերաբերող ՍԱԸ (0-00-PRO-ENV-82072):

Հողի մաքրման թույլտվության ընթացակարգը վերաբերում է Ծրագրի շինթույլտվության տարածքի շրջանակներում իրականացվող աշխատանքին: Շինթույլտվության տարածքից դուրս իրականացվելիք Ծրագրին առնչվող աշխատանքների համար գոյություն ունի արտոնման առանձին ընթացակարգ՝ **0-00-PRO-ENV-82075 Բնապահպանական տեսանկյունից վերահսկելի տարածքներ մուտքի Ստանդարտ աշխատանքային ընթացակարգ**, որը նախագծվել է ապահովելու Ծրագրի կողմից ստանձնած պարտավորությունների իրականացումը նույնիսկ Ծրագրի զբաղեցրած տարածքից դուրս իրականացվող աշխատանքներում:


Զբաղեցրած տարածքի կառավարման համար ներկայացվող պահանջները վերցվել են Ծրագրի ԲՄԱԳ-ից՝ Պարտավորությունների գրանցամատյանի միջոցով: Դրանք Աղյուսակ 1-ում խմբավորվել են ըստ հետևյալ կատեգորիաների.

- Հողի խախտում,
- Հողատարածքի զբաղեցում,
- Հանգույցների և սարքավորումների տեղադրում, ավտոմեքենաների երթևեկություն,
- Հողի կառավարում և տեղափոխում,
- Փոշու և աղմուկի վերահսկում,
- Հոսքերի կառավարում և էրոզիայի վերահսկում,
- Վիզուալ ասպեկտներ, և
- Կենսամիջավայրի և կենսաբազմազանության ասպեկտներ:

Աղյուսակ 1-ում ներկայացված պարտավորություններն ու միջոցառումները վերաբերում են Ծրագրի ՇՄԱԳ-ում և ԲՄԱԳ-ում նկարագրված հողատարածքների զբաղեցմանը: Ծրագրի իրականացման ընթացքում առաջացող լրացուցիչ հողերի անհրաժեշտությունը պետք է պարզել նախատեսվող տարածքներն օգտագործել սկսելու ժամկետից առնվազն երեք ամիս առաջ: Ծանուցումը պետք է ներառի բնապահպանական և սոցիալական նախնական գնահատումը, ըստ **0-00-PRO-ENV-82140 Բնապահպանական և սոցիալական ազդեցության ուսումնասիրության վերաբերյալ ՍԱԸ-ի**, որը թույլ է տալիս որոշել, թե արդյոք աշխատանքը կարող է շարունակվել Հողի մաքրման արտոնման ՍԱԸ-ի հիման վրա կամ էլ Հայաստանի օրենսդրությամբ սահմանվող թույլտվության (ՇՄԱԳ) կամ ֆինանսավորող ընկերությունների պահանջների (ԲՄԱԳ) պաշտոնական գնահատման անհրաժեշտություն կա:


Աղյուսակ 1-ում նշված պարտավորությունների կատարման գործընթացը գրանցվում է **0-00-OTH-ENV-82158 ԲՄԱԳ-ի Պարտավորությունների կատարման դինամիկայի գրանցամատյանում**:




	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՄԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՀՀ	Լիդիանի փաստաթուղթ#	0-00-PLN-ENV-82110	
		Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան	
Ամսաթիվ՝ մարտ, Մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան	Տարբերակ #	Տարբերակ 3	Էջ 4

**Աղյուսակ 1. Ծրագրի զբաղեցրած տարածքին առնչվող ԲՄԱԳ-ում ներառված պարտավորությունները**


Կոդ	Պարտավորություն/Գործողություն	Մանրամասնում	Ծրագրի փուլ	Փաստաթղթեր	Խաչաձև հղում այլ ԿՊ-ին	Գործողության հաճախականություն	Պատասխանատվություն	Ստուգման ցուցիչ
Հողի խախտում								
CH01 CH04	Ծրագրի զբաղեցրած տարածքի չհետազոտված մասերում կարող են լինել լրացուցիչ, դեռևս չբացահայտված հնագիտական հուշարձաններ: Այս տարածքներում իրականացվելու են լրացուցիչ մակերեսային հետախուզական աշխատանքներ: Լրացուցիչ հուշարձանների հայտնաբերման դեպքում ազդեցությունները մեղմացնելուն ուղղված շրջանցման միջոցառումներ կամ պեղումներ կիրականացվեն նշված այդ տարածքներում՝ հավանական ազդեցությունները մեղմելու և կառավարելու նպատակով: Ծրագիրը կցուցաբերի փուլային մոտեցում գնահատելիս, թե որ հուշարձանները ամբողջական պեղումների կարիք ունեն, և ինչպիսին պիտի լինի դրանց պեղման տարածքը: Ծրագրի զբաղեցրած տարածքում և առաջարկվող Ծրագրի բաղադրիչներից 50մ շառավղի սահմաններում գտնվող հավանական հուշարձանները կենթարկվեն հնագիտական հետազոտման դաշտային պայմաններում՝ սահմանափակ և թիրախային պեղումների ծրագրի միջոցով:	Խախտման ենթակա ցանկացած տարածք պետք է «մաքրվի» մշակութային ժառանգության գծով խորհրդատուի կողմից: Մաքրումը կներառի հնագիտական պեղումներ: Այս գործողությունը պետք է կատարվի նախատեսված շինարարական աշխատանքներից շաբաթներ կամ ամիսներ առաջ: Մշակութային ժառանգության գծով խորհրդատուի հետ անհրաժեշտ է խորհրդակցել մաքրման աշխատանքների համար թույլատրելի ժամանակը պարզելու համար:	Նախ.	ՄԺ խորհրդատուի կողմից հաստատում	ՄԺԿՊ	Ըստ անհրաժեշտության	Բնապահպանության գծով մենեջեր	
BIO05	Նախաշինարարական ստուգումները (ուսումնասիրությունները) անցկացվելու են հողային աշխատանքներից անմիջապես առաջ՝ հաստատելու համար, որ սույն ԲՄԱԳ-ում ներկայացված կենսաբազմազանության ելակետային տվյալները չեն ենթարկվել էական փոփոխությունների:	«Անմիջապես առաջ» նշանակում է մեկ կամ երկու օր առաջ: Ուստի այս հետազոտությունները պետք է իրականացվեն նախքան շինարարությունը հողի մաքրման թույլտվություն ստանալը:	Շին.	Հողի մաքրման թույլտվություն	ԿԿՊ	Ըստ անհրաժեշտության	Բնապահպանության գծով մենեջեր	
BIO73	Հողային աշխատանքների արդյունքում ազդեցության ենթարկվելու դեպքում, նախատեսվում է իրականացնել կովկասյան էնդեմիկ բուսատեսակների, այդ թվում՝ <i>Fritillaria armena</i> , <i>Phelypaea tournefortii</i> և <i>Juniperus polycarpu</i> տեղափոխություն:	Սա ոչ պաշտոնական գործողություն է և դրա համար ՀՀ կառավարության թույլտվությունն անհրաժեշտ չէ:	Շին.		ԿԿՊ	Ըստ անհրաժեշտության	Կենսաբազմազանության հարցերով պատասխանատու	

	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՄԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՀՀ	Լիդիանի փաստաթուղթ#	0-00-PLN-ENV-82110		
		Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան		
Ամսաթիվ՝ մարտ, Մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան		Տարբերակ #	Տարբերակ <b>3</b>	Էջ 5


Կոդ	Պարտավորություն/Գործողություն	Մանրամասնում	Ծրագրի փուլ	Փաստաթղթեր	Խաչաձև հղում այլ ԿՊ-ին	Գործողության հաճախականություն	Պատասխանատվություն	Ստուգման ցուցիչ
SL02 SL09 BIO17 LV10	Շինարարության և շահագործման փուլերում խախտման ենթակա տարածքները (այդ թվում հողի պահեսատնվորման տարածքները) պետք է նախապես հստակորեն սահմանագատվեն ու առանձնացվեն նշաններով, իսկ նշյալ սահմաններից դուրս գտնվող տարածքներում որևէ գործողություն կատարելն արգելվում է: Պետք է հստակ սահմանվեն հանված հողի և կույտի միջև ընկած հանքատար ուղիները: Ծրագրի զբաղեցրած տարածքից դուրս բնական բուսականությունը խախտելուց խուսափելու նպատակով կսահմանափակվի ավտոմեքենաների և ոտքով տեղաշարժը գոյություն ունեցող ճանապարհներով և արահետներով, ինչպես նաև նախատեսվող բացատար և հանքատար ճանապարհներով:	Մա զբաղեցրած տարածքի կառավարման հիմնարար կանոն է. ԲՄԱԳ-ով սահմանված զբաղեցրած տարածքից դուրս խախտում չի լինի:	Նախ., Շին., Շահ.	Շինարարական փուլի տեղամասի գծագրեր, Հողի մաքրման թույլտվություն	ԿԿՊ	Շարունակական մոնիթորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
CH05 CH06	Պատահական գտածոների հայտնաբերման դեպքում գործողությունների ընթացակարգը կիրականացվի շինարարության ողջ ընթացքում: Համապատասխան աշխատակիցների և կապալառուների համար կանցկացվեն վերապատրաստման դասընթացներ հնագիտական պատահական գտածոները ճանաչելու, դրանց հետ վարվելու հետ կապված: Հնագետները կմշտադիտարկեն շինարարական տեղամասերը հողի խախտման ժամանակ հնագիտական գտածոները ճանաչելու և դրանց հետ վարվելու կապակցությամբ ցուցումներ տալու նպատակով:	Մշակութային ժառանգության գծով խորհրդատուն պետք է ներգրավված լինի հողի խախտման պլանավորման գործում որոշելու, թե երբ պետք է ներկա գտնվի տեղամասում:	Շին.,		ՄԺԿՊ	Ըստ անհրաժեշտության	Բնապահպանության գծով մենեջեր	

	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՄԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՀՀ	Լիդիանի փաստաթուղթ#	0-00-PLN-ENV-82110		
		Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան		
Ամսաթիվ՝ մարտ, Մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան		Տարբերակ #	Տարբերակ 3	Էջ 6

Կոդ	Պարտավորություն/Գործողություն	Մանրամասնում	Ծրագրի փուլ	Փաստաթղթեր	Խաչաձև հղում այլ ԿՊ-ին	Գործողության հաճախականություն	Պատասխանատվություն	Ստուգման ցուցիչ
LV52	<p>Լիդիան ընկերությունը կապահովի, որպեսզի որակավորված լանդշաֆտային ճարտարագետը պարտադիր այցելություններ կատարի Ծրագրի տարածք համապատասխան կանոնավոր ընդմիջումներով, ըստ համաձայնեցված ժամանակացույցի, իսկ լանդշաֆտային/բնապահպանական աշխատանքների պատասխանատուն այցելի տեղամաս ներքոնշյալ աշխատանքների իրականացման ընթացքում.</p> <ul style="list-style-type: none"> <li>Պահպանելու կամ հեռացնելու ենթակա բուսականության որոշում</li> <li>Բուսահողի վերին շերտի հեռացում</li> <li>Հողային աշխատանքներ և ռելիեֆի հավասարեցում</li> <li>Ավելցուկային մակերեսների ջարդում</li> <li>Ենթահողի կտրում</li> <li>Հողի տարածում</li> <li>Հողի մշակում</li> <li>Հողի նախապատրաստում ցանքի և տունկի նպատակով և</li> <li>Ցանք և տունկ:</li> </ul>	<p>Մրա համար անհրաժեշտ է նախնական պլանավորում և լանդշաֆտի գծով մասնագետի և/կամ աշխատանքների պատասխանատուի ներգրավումը: Շինարարական խումբը ամբողջովին պետք է տեղյակ լինի այս պահանջի մասին:</p>	Նախ., Շին., Շահ.			Ըստ անհրաժեշտության	Բնապահպանության գծով մենեջեր	
<b>Հողատարածքի զբաղեցում</b>								
BIO08 LDUS01 LV48	<p>Որպես նախագծման հիմնարար սկզբունք, նախատեսվում է նվազագույնի հասցնել Ծրագրի ենթակառուցվածքի ազդեցության տարածքներն և մաքրման ենթակա հողատարածքները: Նախագծման ընթացքում քայլեր կձեռնարկվեն Ծրագրի զբաղեցրած տարածքն ավելի կրճատելու ուղղությամբ: Ծրագրի նախատեսվող յուրաքանչյուր բաղադրիչ ենթակա կլինի հետագա ճարտարագիտական նախագծման վերանայման՝ խորհրդակցելով համապատասխան մասնագետ-խորհրդատուների հետ և փորձելով նվազեցնել կամ վերացնել հայտնաբերված լանդշաֆտային և վիզուալ ազդեցությունները:</p>	<p>Սա նախագծման փուլում ստանձնած պարտավորություն է, սակայն այն հաստատում է այն կարևորությունը, որը ԲՄԱԳ-ի հեղինակները տվել են Ծրագրի զբաղեցրած տարածքը կրճատելու անհրաժեշտությանը, և հաստատում է այն, որ զբաղեցրած տարածքից դուրս ոչ մի խախտում չպետք է լինի:</p>	Նախ.			Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	


 Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՄԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՀՀ	Լիդիանի փաստաթուղթ#	0-00-PLN-ENV-82110
	Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան
Ամսաթիվ՝ մարտ, Մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան	Տարբերակ # Տարբերակ 3 Էջ 7

Կոդ	Պարտավորություն/Գործողություն	Մանրամասնում	Ծրագրի փուլ	Փաստաթղթեր	Խաչաձև հղում այլ ԿՊ-ին	Գործողության հաճախականություն	Պատասխանատվություն	Ստուգման ցուցիչ
LDUS02 LDUS03 LDUS08 CHSS36 CHSS82 BIO63 ES02 ES05	Կպահպանվի Ծրագրի ազդակիր տարածքի հարևանությամբ գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի հասանելիությունը, որտեղ դա ապահով է: Հողերը կցանկապատվեն միայն անհրաժեշտության դեպքում և զծային օբյեկտների նկատմամբ մուտքի անցումներ կկիրառվեն՝ հասանելիությունը պահպանելու նպատակով: Արտավայրերի և կերհանդակների սահմանափակ հասանելիության պատճառով ազդեցությունների գնահատման նպատակով կիրականացվի հողօգտագործողների մոնիթորինգ՝ որոշելով լրացուցիչ մեղմացման միջոցառումներն՝ ըստ անհրաժեշտության: Կմշտադիտարկվեն Գնդեվազի բնակիչների համար բարձրորակ արտավայրերի և խոտաբքների տարածքներ մտնելու հնարավորությունը, խոտի արտադրությունը և գները:	Վերը նշվածի հետ կապված սա հաստատում է տեղացի բնակիչների տեղաշարժի ու գործունեության խաթարումը հնարավորինս սահմանափակելու անհրաժեշտությունը: Մա մասնավորապես վերաբերում է հովիվներին և սունկ և խոտաբույսեր հավաքողներին: Պարտավորություն կա մշտադիտարկել իրավիճակը և համապատասխան քայլեր ձեռնարկել, եթե տեղացի բնակիչներն ազդեցություն կրեն (նման դեպքերի համար նախատեսված է գանգատարկման մեխանիզմ):	Նախ., Շին., Շահ.		ՀԶԿՎՊ ԿԿՊ	Շարունակական մոնիթորինգ	Սոցիալական հարցերով մենեջեր	
SL07	Ժամանակավոր հանգույցների զբաղեցրած տարածքը, օր.՝ շինարարության համար մերձատար ճանապարհները և սարքավորումների, օժանդակ նյութերի համար մաքրված տարածքները, հնարավորինս կնախագծվեն այնպես, որ համընկնեն Ծրագրի երկարաժամկետ պահանջների հետ՝ հողերի խախտումը և երկարաժամկետ ազդեցությունները նվազեցնելու նպատակով:	Սա նախագծման փուլում ստանձնած պարտավորություն է, կճշտվի շինարարության ընթացքում:	Նախ., Շին., Շահ.	Շինարարական փուլի տեղամասի գծագրեր				
BIO09	Կենսամիջավայրի մասնատումը, արգելքների հետևանքները և նախապես չխախտված տարածքների ներգրավումը նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսվում է նախագծել նոր մերձատար ճանապարհներ:	Նոր մերձատար ճանապարհների անհրաժեշտության դեպքում կպահանջվի իրականացնել պաշտոնական գնահատում (հողի մաքրման ընթացակարգը չի կարգավորում որևէ հողի խախտում, եթե այն չի ենթարկվել ՇՄԱԳ/ԲՄԱԳ-ի):	Նախ., Շին., Շահ.		ԿԿՊ		Բնապահպանության գծով մենեջեր	
BIO02 BIO03 BIO12	Ծրագրին առնչվող ոչ մի գործողություն տեղի չի ունենա Արշակի առանձնացված անձեռնմխելի տարածքում:	Առանձնացված տարածքը կենսաբազմազանության մեղմացման հիերարխիայի կարևոր բաղադրիչ է, որը կխաթարվի, եթե Ծրագրի գործողություններն իրականացվեն: Այս պահանջն անհրաժեշտ է ամրագրել համապատասխան քաղաքականությամբ և ողջ անձնակազմին պետք է վերապատրաստել և վստահեցնել, որ ոչ մի ներում չի լինի, եթե որևէ մեկը որևէ գործողություն իրականացնի այդ տարածքում:	Նախ., Շին.		ԿԿՊ	Շարունակական մոնիթորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	


	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՄԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՀՀ	Լիդիանի փաստաթուղթ#	0-00-PLN-ENV-82110	
		Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան	
Ամսաթիվ՝ մարտ, Մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան	Տարբերակ #	Տարբերակ 3	Էջ 8

Կոդ	Պարտավորություն/Գործողություն	Մանրամասնում	Ծրագրի փուլ	Փաստաթղթեր	Խաչաձև հղում այլ ԿՊ-ին	Գործողության հաճախականություն	Պատասխանատվություն	Ստուգման ցուցիչ
BIO50	Կատարվում է <i>Մատնունի Ծիրանավոր</i> բույսերի գտնվելու վայրերի հաշվառում, ցանկապատում և ներկում՝ հնարավորինս երկար ժամանակի ընթացքում այդ բույսերի պաշտպանության նպատակով: Կանոնավոր ստուգումներ և մշտադիտարկումներ կիրականացվեն, որպեսզի ներկված հատվածները միշտ տեսանելի լինեն, և որ աշխատակիցները տեղյակ լինեն նշված քարերը պահպանելու անհրաժեշտության մասին:	Կսահմանագատվեն արգելված տարածքները	Նախ., Շին., Շահ.		ԿԿՊ	Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
BIO69	Մողունների (այդ թվում Կարմիր գրքում գրանցված) ամենամեծ բազմազանությունը արձանագրվել է նախատեսվող ԿՏՀ-ի հյուսիսային և արևմտյան սահմանին քարքարոտ լանջերին և մերկացած ապարների վրա: Այս կենսամիջավայրը հնարավորինս կպահպանվի վերահսկելով ենթակառուցվածքի զբաղեցրած տարածքից դուրս կենսամիջավայրի պատահական վնասումը: Անհրաժեշտ է նաև տեղացիներին տեղեկացնել պահպանման համար այս տեսակների կարևոր նշանակության մասին, ինչը թույլ կտա կրճատել օձերին դիտավորյալ սպանելու դեպքերը:	Կսահմանագատվեն արգելված տարածքները	Շին., Շահ.		ԿԿՊ	Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
CH02	Մշակութային ժառանգության հայտնի հուշարձանները կնշվեն (բարձ տեսանելիություն ունեցող նյութերով) և հնարավորության դեպքում կշրջանցվեն: Հայտնի հնագիտական հուշարձանների և մեծ պոտենցիալ ունեցող տարածքների շուրջը կստեղծվեն համապատասխան պաշտպանիչ և արգելված գոտիներ:	Հուշարձանների նշումը պետք է կատարվի մշակութային ժառանգության հարցերով խորհրդատուի հետ խորհրդակցելով:	Նախ., Շին., Շահ.		ՄԺԿՊ		Բնապահպանության գծով մենեջեր	
NV33	Պայթեցումների ժամանակ հանքափոսերի շուրջը կստեղծվի 500մ սահմանափակ տարածք:	Դրա համար անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրություն և պլանավորում: 500 մետրանոց գոտու ցանկապատումը գործնականորեն նպատակահարմար չէ (և ցանկալի չէ հանրային օգտագործման նպատակով հասանելիության տեսանկյունից): 500մ գոտին մասամբ համընկնում է Արշակի առանձնացված տարածքի հետ, որտեղ ավտոմեքենաների մուտքը չի թույլատրվի (միայն առկա ճանապարհներին): Ուստի հնարավոր է հետիոտն պահակախմբի կարիք լինի, որը կապահովի, որ ոչ ոք պաշտպանիչ գոտու տարածք չմտնի:	Նախ., Շահ.		ՕՈԱԿԿՊ	Ըստ անհրաժեշտության	Բնապահպանության գծով մենեջեր	

*Հանգույցների և սարքավորումների տեղադրում և ավտոմեքենաների երթևեկություն*


 Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՄԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՀՀ	Լիդիանի փաստաթուղթ#	0-00-PLN-ENV-82110	
	Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան	
Ամսաթիվ՝ մարտ, Մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան		Տարբերակ # Տարբերակ 3 էջ 9

Կոդ	Պարտավորություն/Գործողություն	Մանրամասնում	Ծրագրի փուլ	Փաստաթղթեր	Խաչաձև հղում այլ ԿՊ-ին	Գործողության հաճախականություն	Պատասխանատվություն	Ստուգման ցուցիչ
LV12 LV14	Շինարարական ճամբարը, կապալառուների ճամբարը և ժամանակավոր պահուստավորման տեղամասերը կգտնվեն զգայուն ընկալիչներից և տեսադաշտից հնարավորինս հեռու: Դրանց տեղադիրքը կնախագծվի աշխատանքային նախագծի փուլում՝ հաշվի առնելու ռելիեֆի և գոյություն ունեցող լանդշաֆտի տարրերի կողմից ապահովվող բնական շղարշը	Սա նախագծման փուլում ստանձնած պարտավորություն է: Շինարարական փուլում կիրականացվի մոնիտորինգ պարզելու, թե լրացուցիչ (արհեստական) քողարկում անհրաժեշտ է, թե ոչ:	Նախ.			Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
BIO11 LV25 AQ08 GHG2 SL04 TR07	Ավտոտրանսպորտային միջոցների մուտքը Ծրագրի ազդակիր գոտու տարածք հասցվելու է նվազագույնի: Բանվորների մեծամասնությունը շինհրապարակ են հասցվելու ավտոբուսով, իսկ աշխատողների համար նախատեսվելու է սահմանափակ թվով մեքենաների կայանատեղի: Աշխատանքները կօպտիմալացվեն ավտոմեքենաների երթևեկության քանակը սահմանափակելու համար, մեքենաների պարապուրդը և երթևեկության հեռավորությունը նվազագույնի հասցնելու և, հնարավորության սահմաններում, կրկնակի բեռնումից խուսափելու համար:	Սա կարևոր պարտավորություն է, սակայն հատուկ նպատակային չէ: Անհրաժեշտ է իրականացնել մշտադիտարկում բարելավման հնարավորություններ գտնելու նպատակով:	Նախ., Շին., Շահ.		ՏԿՊ		Environmental Manager	
BIO20	Ինվազիվ բուսատեսակներ ներմուծելու կամ առկա ինվազիվ բույսերը տարածելու հավանականություն ունեցող մեքենաները անհրաժեշտ է լվանալ արտադրական հրապարակ կամ նշված բուսականությունից ազատ տարածքներ մուտք գործելուց առաջ (լվացման համար ջուրը անհրաժեշտ է պահել համապատասխան տարաներում):	Այստեղ կենսաբազմազանության գծով մասնագետները պետք է խորհուրդ տան մոլախոտերի դեմ պայքարի համար անհրաժեշտ միջոցառումների հետ կապված	Շին., Շահ.		ԿԿՊ	Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
<b>Հողի կառավարում և տեղափոխում</b>								
SL01	Հողը կհեռացվի և կտեղափոխվի միայն բավարար չափով չոր լինելու դեպքում: Ընդհանուր առմամբ հողի հետ կապված աշխատանքները սահմանափակվում են մայիսից մինչև հոկտեմբերն ընկած ժամանակահատվածով, չնայած, ձնածածկույթի բացակայության դեպքում այդ ժամանակահատվածը կարող է ավելի երկար տևել:	Այս պահանջն արտացոլում է լեռան վրա հողերի զգայունությունը: Ուստի այն անհրաժեշտ է պլանավորել և խորհրդակցել հողերի գծով մասնագետի հետ, որպեսզի չխախտվի շինարարության ժամանակացույցը: Շինարարական խումբը պետք է ամբողջովին տեղեկացված լինի:	Նախ., Շին., Շահ.	Հողի մաքրման թույլտվություն			Բնապահպանության գծով մենեջեր	

	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՄԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՀՀ	Լիդիանի փաստաթուղթ#	0-00-PLN-ENV-82110	
		Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան	
Ամսաթիվ՝ մարտ, Մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան		Տարբերակ #	Տարբերակ 3 էջ 10


Կոդ	Պարտավորություն/Գործողություն	Մանրամասնում	Ծրագրի փուլ	Փաստաթղթեր	Խաչաձև հղում այլ ԿՊ-ին	Գործողության հաճախականություն	Պատասխանատվություն	Ստուգման ցուցիչ
SL03 SL05 SL06 BIO44 LV15	Ընդունված կարգի համաձայն և որտեղ դա տեխնիկապես հնարավոր է, կտրվում և առանձին պահպանման է հանձնվում վերին 10սմ-ոց հողաշերտը: Այդուհանդերձ, կան տարածքներ, որտեղ ապառաժների առատությունը հողի հեռացումը դարձնում է անհնար: Ինժեներների հետ միասին կատարվի մանրամասն քարտեզ, որը ցույց կտա այն տարածքները, թե որտեղ կարելի է հողը հանել, և որտեղ ոչ: Քանի որ բարձրալեռնային շատ բույսեր հազվադեպ են սերմակալում և տարածվում են վեգետատիվ կերպով, ապա տեսակներով հարուստ ճմառողերը կհեռացվեն նախքան քանդման աշխատանքները և կպահվեն վերականգնման ընթացքում ցանված տարածքում լրացնելու համար: Բացահանքերից հանված փխրուն հողը/ապարները կկուտակվեն առանձին՝ Մատնունի ծիրանավորի աճելավայրի վերականգնման համար օգտագործելու նպատակով:	Սա կարևոր տարր է վերականգնումը պլանավորելու համար: Դրա համար անհրաժեշտ է նախօրոք պլանավորում: Հողերի/բուսաբանության գծով մասնագետը պետք է այցելի տեղամաս, քարտեզագրի հողահեռացման համար կարևոր տարածքները: Շինարարական խումբը այս պահանջի մասին պետք է տեղեկացված լինի նախօրոք (այն վերաբերում է հիմնականում լեռան գագաթային հատվածին, այսինքն՝ բացահանքերի զբաղեցրած տարածքին):	Նախ., Շին.	Հողի մաքրման թույլտվություն	ԿԿՊ	Հողի բերրի շերտի հեռացման ընթացքում	Բնապահպանության գծով մենեջեր	
BIO46	Բուսաշերտի պահեստավորման համար տեղադիրքերի ընտրությունը կատարվելու է այնպես, որ հնարավոր լինի շրջանցել բնական բուսատեսակների «լավ» նմուշներն ու քարերը, որոնց վրա աճում է Մատնունի ծիրանավորը:	Անհրաժեշտ է խորհրդակցել	Շին.		ԿԿՊ	Ըստ անհրաժեշտության	Կենսաբազմազանության հարցերով պատասխանատու	
SL19 SL21	Այն տարածքներում, որտեղ ենթակառուցվածքի կառուցման համար կպահանջվի կարճաժամկետ խախտում, հողերը ժամանակավորապես կպահեստավորվեն, և շինարարության ավարտից հետո կկատարվի հետլիցք և մակերևույթի բուսածածկի վերականգնում:		Շին.			Ըստ անհրաժեշտության	Բնապահպանության գծով մենեջեր	
BIO21 SL22 SL27	Այն տարածքներում, որտեղ երկարաժամկետ խախտում կպահանջվի հողը կպահպանվի թմբերով, և համապատասխանության դեպքում վերին շերտը կանջատվի ենթաշերտից: Անհրաժեշտ է իրականացնել բուսահողի լցակույտերի կայունացում՝ նվազեցնելու համար քամով պայմանավորված փոշու տարածումը: Բոլոր թմբերի համար անհրաժեշտ է ապահովել տվյալ տեղադիրքի համար հարմար տարբեր տեսակի խոտածածկույթ, որը պետք է պահպանվի շահագործման փուլի ողջ ընթացքում.		Շին., Շահ.			Ըստ անհրաժեշտության	Բնապահպանության գծով մենեջեր	




	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՄԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՀՀ	Լիդիանի փաստաթուղթ #	0-00-PLN-ENV-82110		
		Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան		
Ամսաթիվ՝ մարտ, Մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան		Տարբերակ #	Տարբերակ 3	էջ 11

Կոդ	Պարտավորություն/Գործողություն	Մանրամասնում	Ծրագրի փուլ	Փաստաթղթեր	Խաչաձև հղում այլ ԿՊ-ին	Գործողության հաճախականություն	Պատասխանատվություն	Ստուգման ցուցիչ
SL26	Հողի բերրի շերտը կպահվի ոչ բարձր, քան 3մ կույտերով (կամ 5մ, եթե այն անհրաժեշտ է վիզուալ քողարկման համար), որը թույլ կտա նվազեցնել պահուստավորման ժամանակ հողի խտացման և ֆիզիկական ու կենսաբանական փոփոխությունների հավանականությունը: Ենթահողը կկուտակվի մինչև 5մ թմբերով:		Նախ., Շին., Շահ.			Ըստ անհրաժեշտության	Բնապահպանության գծով մենեջեր	
SL35	Կուտակումն ավարտելուց հետո կիրականացվի հողի ծավալների հետազոտություն: Հետազոտված հողաթմբերը կներառվեն հանքի բոլոր պլաններում դրանց առնչվող պաշտպանիչ միջոցառումների և ցամաքորդային համակարգի հետ միասին: Հողի ծավալը ֆիզիկական հատկությունների հետ միասին կարձանագրվի՝ ՀՌՓՎՆՊ-ի մշակման մեջ այն կիրառելու նպատակով:		Շին., Շահ., Փակ.	Կույտի հետազոտության հաշվետվություն	ՀՌՓՎՆՊ	Ըստ անհրաժեշտության	Բնապահպանության գծով մենեջեր	
<b>Փոշու և աղմուկի վերահսկում</b>								
AQ06 AQ10 NV13 NV29	Ծրագրի տեղամաս մտնող առաջնային ճանապարհային հանգույցները (A և B) կասֆալտապատվեն, որը թույլ կտա մեղմացնել պետական մայրուղու վրա փոշու տարածումը: Չասֆալտապատված ճանապարհների վրա խճի/լատերիտի շերտը լավ վիճակում կպահվի, և արագության սահմանափակում կկիրառվի՝ անվադողերի աղմուկն ու փոշու գոյացումը կրճատելու նպատակով:		Նախ., Շին.		ՏԿՊ ՕՈԱՎԿՊ	Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
AQ07 BIO18 NV28	Արագության սահմանափակում կմտցվի մերձատար և հանքատար ճանապարհներով ընթացող մեքենաների համար (15 կմ/ժ գրունտային ճանապարհների վրա)՝ փոշու արտանետումներն ու կենդանիների մահացության ռիսկերը նվազեցնելու համար: Աշխատակիցների համար վերապատրաստման տարեկան դասընթացները կներառեն ապահով վարման և արագության սահմանափակման պահպանման հրահանգավորումներ:		Շին., Շահ.	Աշխատողների վերապատրաստման դասընթացների գրառումներ	ՏԿՊ	Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	




	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՄԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՀՀ	Լիդիանի փաստաթուղթ#	0-00-PLN-ENV-82110		
		Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան		
Ամսաթիվ՝ մարտ, Մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան		Տարբերակ #	Տարբերակ <b>3</b>	էջ 12


Կոդ	Պարտավորություն/Գործողություն	Մանրամասնում	Ծրագրի փուլ	Փաստաթղթեր	Խաչաձև հղում այլ ԿՊ-ին	Գործողության հաճախականություն	Պատասխանատվություն	Ստուգման ցուցիչ
AQ12	Փոշեգոյացման կանխարգելման միջոցառումների շրջանակներում Ծրագրի գործողությունների հետևանքով առաջացող փոշու աղբյուրի և Գնդեվազ գյուղի միջև համապատասխան վայրերում կարող են տնկվել տեղանքին բնորոշ թփեր (կամ կենսաբազմազանության գծով մասնագետների կողմից առաջարկվող այլ ծառատեսակներ): Բուսական արգելքներ կօգտագործվեն այն հանգամանքներում, եթե հանրային քննարկումների արդյունքում նշվի, որ անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ միջոցառումների, և որ այդ միջոցառումներն ընդունելի են շահագրգիռ կողմերի համար:		Շին., Շահ.		ՕՈԱՎԿՊ	Ըստ անհրաժեշտության	Սոցիալական հարցերով մենեջեր	
AQ21	Փոշու արտանետումների աղբյուրները բացահայտելու նպատակով իրականացվող վիզուալ մշտադիտարկման համար կմշակվի աշխատանքների ստանդարտ ընթացակարգ: Ստուգումներ կանցկավեն պարզելու փոշու գոյացման աղբյուրների ծածկույթը, այդ թվում՝ բացահանքեր, հանքատար ճանապարհներ, ջարդիչ կայան, ԴԱԼ և փոխակրիչի բեռնաթափման կետեր:	Անհրաժեշտ է անձնակազմի վերապատրաստում: Աշխատանքների ստանդարտ ընթացակարգը կներառվի ԲԿՊ-ում:	Նախ., Շին., Շահ.		ԲԿՊ	Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
<b>Վիզուալ ասպեկտներ</b>								
LV53	Տեսանելի վայրերում, որտեղ տեղակայված են Ծրագրի բաղադրիչները, որոնք խախտում են երևացող հորիզոնների կամ լեռնաշարի տեսարանը, աշխատանքների մանրակրկիտ պլանով նախատեսվում է մեղմացնել այս ազդեցությունները նշված բաղադրիչների վերանախագծման կամ այլընտրանքային տարբերակների ստեղծման միջոցով (օրինակ՝ ուղղահայաց բարձրության նվազեցում), որպեսզի համապատասխանի շրջակա բնապատկերին և որտեղ հնրավոր է մեղմացվի վիզուալ ազդեցությունը:	Մա նախագծման փուլում ստանձնած պարտավորություն է, անհրաժեշտ է հաստատել մինչև շինարարությունը սկսելը	Նախ.			Ըստ անհրաժեշտության	Բնապահպանության գծով մենեջեր	

	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՄԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՀՀ	Լիդիանի փաստաթուղթ#	0-00-PLN-ENV-82110	
		Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան	
Ամսաթիվ՝ մարտ, Մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան	Տարբերակ #	Տարբերակ 3	Էջ 13


Կոդ	Պարտավորություն/Գործողություն	Մանրամասնում	Ծրագրի փուլ	Փաստաթղթեր	Խաչաձև հղում այլ ԿՊ-ին	Գործողության հաճախականություն	Պատասխանատվություն	Ստուգման ցուցիչ
LV01 LV06 LV07	<p>Կլիբրատվեն այնպիսի միջոցառումներ, ինչպես օրինակ՝ «կետերի առանձնացում» ստուգման համար, կամ համաձայնեցում, որպեսզի ստուգման վահանակները և նմուշները հնարավոր լինի օգտագործել (օրինակ՝ բաղադրիչների հատուկ նյութերի, գույների և ծածկույթների կիրառում), միջոցներ ձեռք առնելու մինչև Ծրագրի ազդակիր տարածքին դրանց միահյուսվելը և ամբողջականությունն դառնալը:</p> <p>Թուլացված գույները հարմար կլինեն բնական լանդշաֆտի համար և կդիտարկվեն շենքերի և բաղադրիչի արտաքին մակերեսների գույների համար, որոնք կխառնվեն շրջակա լանդշաֆտի հետ և չեն հակադրվի կամ աչքի ընկնի հետվից:</p>	Նախագծման ընթացքում պատշաճ պլանավորումը և խորհրդակցությունը կարող է բացառել սրա անհրաժեշտությունը	Նախ., Շին.				Բնապահպանության գծով մենեջեր	
LV02	<p>Առավել ընդարձակ լանդշաֆտի և կենսամիջավայրի հզորացման միջոցառումներ կմշակվեն և կհամաձայնեցվեն Լիդիան ընկերության, հողատերերի և օրինավոր խորհրդատուների հետ խորհրդակցության արդյունքում Ծրագրի նախնական տարիներին մինչ տեղամասում շինարարության սկսելը:</p>		Նախ.				Բնապահպանության գծով մենեջեր	
LV04 LV05 LV11 LV26 BIO14	<p>Ծրագրի տեղամասի տարածքը կպահվի մաքուր և կարգին վիճակում:</p> <p>Արտաքին խառնաշփոթը կնվազի, եթե Ծրագրի բաղադրիչները ներփակված լինեն պարզ շինությունների մեջ, որոնք հնարավորինս համապատասխանում են տեղանքի ռելիեֆին:</p> <p>Ծրագրի բաղադրիչների, այդ թվում՝ ԱԴՎ կայանի, գրասենյակների և աշխատուժի կացարանների շուրջը քիչ խառը տեսարաններ, որոնք կարելի է փակել բուսականությամբ ծածկված հողաթմբերով: Նյութերն ու տեխնիկան աշխատանքի վայրում չեն մնա ավելի երկար, քան պահանջվում է շինարարության նպատակներով:</p>		Նախ., Շին., Շահ.			Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	

	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՄԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՀՀ	Լիդիանի փաստաթուղթ#	0-00-PLN-ENV-82110		
		Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան		
Ամսաթիվ՝ մարտ, Մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան		Տարբերակ #	Տարբերակ <b>3</b>	էջ 14


Կոդ	Պարտավորություն/Գործողություն	Մանրամասնում	Ծրագրի փուլ	Փաստաթղթեր	Խաչաձև հղում այլ ԿՊ-ին	Գործողության հաճախականություն	Պատասխանատվություն	Ստուգման ցուցիչ
LV27 LV35 NV06	Աշխատանքային հրապարակների, և անհրաժեշտության դեպքում հանքատար և մերձատար ճանապարհների եզրերով կստեղծվեն հողի բերրի շերտի թմբեր, որոնց վրա կցանվի խոտ կամ այլ բուսականություն՝ Ծրագրի տեղամասի արևմուտքում և հյուսիսում գտնվող ընկալիչների համար վիզուալ ազդեցությունները նվազեցնելու նպատակով: Այս հողաթմբերը թույլ կտան նաև նվազեցնել արհեստական լուսավորության աղբյուրների ընկալելիությունը: Դա վերաբերում է շենքերի և մերձատար և հանքատար ճանապարհներով տրանսպորտային միջոցների երթևեկության ընթացքում լուսարձակներով լուսավորմանը: Կիրականացվի հողի բերրի շերտի թմբերի մշտադիտարկում՝ ապահովելու, որ նրանք պիտանի են հանքարդյունահանումից հետո վերականգնման համար:		Նախ., Շահ.			Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
LV54	Ավտոմեքենաների լուսարձակների լույսի կողային տարածումը նվազեցնելու նպատակով, հատկապես ձմռան ամիսներին մուժ ժամերին, մերձատար և հանքատար ճանապարհների երկայնքով կտեղադրվեն բերմաներ և հողաթմբեր, որոնք թույլ կտան նաև խուսափել կամ նվազեցնել Ջերմուկի և Կեչուտի ընկալիչների վրա լուսարձակների ազդեցությունը լեռան արևմտյան լանջերին տեղամասի հանքատար ճանապարհներով դեպի հյուսիս երթևեկելիս:		Նախ., Շին.			Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
LV08 BIO39 BIO40	Որտեղ հնարավոր է, շենքերի պատուհանները կփակվեն շերտավարագույրերով լույսի տարածումը կանխելու նպատակով: Դրսի հատվածներում նախատեսվում է ապահովել նվազագույն լուսավորություն՝ անվտանգության նկատառումներից ելնելով (կկիրառվեն սենսորներ՝ դրանք միացված թողնելու վտանգից խուսափելու նպատակով):		Նախ., Շին., Շահ.			Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
BIO37 BIO41 LV31	Նախատեսվում է օգտագործել նվազագույն արհեստական լուսավորում՝ անվտանգության նկատառումներից ելնելով: Կիրառվելու է դեպի ներքև ուղղված լուսավորություն՝ լուսավորությամբ պայմանավորված ազդեցությունը գիշերը թռչող տեսակների վրա նվազեցնելու համար:		Նախ., Շին., Շահ.			Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	

	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՄԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՀՀ	Լիդիանի փաստաթուղթ#	0-00-PLN-ENV-82110		
		Մատակարարի փաստաթուղթ #	Բվյալներ չկան		
Ամսաթիվ՝ մարտ, Մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան		Տարբերակ #	Տարբերակ 3	էջ 15


Կոդ	Պարտավորություն/Գործողություն	Մանրամասնում	Ծրագրի փուլ	Փաստաթղթեր	Խաչաձև հղում այլ ԿՊ-ին	Գործողության հաճախականություն	Պատասխանատվություն	Ստուգման ցուցիչ
BIO38 LV30	Կապալառուներից կպահանջվի օգտագործել ցածր լուսարձակ սարքեր, որոնք միաժամանակ կպահովեն բավարար լուսավորություն անվտանգության նպատակներով: Նախատեսվում է նախապատվություն տալ ցածր տեսանելիության սպեկտրով լույսերին ու սարքերին (ամբողջական հատված հարմարանքներ, որոնց արձակած լույսը տարածվում է բացառապես իրենց իսկ հորիզոնական շերտի երկայնքով), իսկ լույսերը տեղադրել նվազագույն անվտանգ բարձրության վրա՝ հնարավորության դեպքում ապահովելով համապատասխան ծածկ:		Նախ., Շին., Շահ.			Ըստ անհրաժեշտության	Բնապահպանության գծով մենեջեր	
LV13 LV19	Շինարարության ժամանակ կշարունակվի հետախուզական աշխատանքների (հորատահարթակներ, մերձատար ճանապարհներ) տեղամասերի վերականգնումը, որի նպատակն է վերականգնել նախկինում խախտված այն տարածքներն ու դրանց բուսածածկույթը, որոնք Ծրագրի շահագործման փուլում ազդեցություն չեն կրի: Կկատարվի տեղական տեսակների ցանք՝ կապելով դրան հարակից բուսականության տիպերի հետ, որտեղ որ անհրաժեշտ է՝ էրոզիան կանխելու նպատակով:		Շին.		ՀՓՌ-ՎՊ	Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
LV17 LV18	Ըստ հնարավորության լանջերը կնախագծվեն այնպես, որ երկարաժամկետ տեսանելի արհեստական ժայռալանջային ամրացման կարիք չառաջանա կամ դրանք հնարավոր լինի ամբողջությամբ ծածկել տորֆով և բուսականությամբ: Ամրացման անհրաժեշտության դեպքում պետք է ձգտել օգտագործել համապատասխան գեոտեքստիլներ, ցանկալի է բնական նյութերից: Կիրականացվի գրունտային ճանապարհների ընտրված տեղամասերի, լանջերի և անցումների տեղային հավասարեցում: Գոյություն ունեցող ժայռային գրունտային ճանապարհների, լանջերի և անցումների տեղայնացված տարածքները կկլորանան՝ ապահովելով գոգավոր կամ ուռուցիկ պրոֆիլներ, և որտեղ հնարավոր է դրանց վրա կտեղադրվի բուսահող/ տորֆ բուսականության վերականգնմանը նպաստելու նպատակով:		Նախ., Շին.			Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	

	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՄԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՀՀ	Լիդիանի փաստաթուղթ#	0-00-PLN-ENV-82110	
		Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան	
Ամսաթիվ՝ մարտ, Մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան		Տարբերակ #	Տարբերակ 3 էջ 16


Կոդ	Պարտավորություն/Գործողություն	Մանրամասնում	Ծրագրի փուլ	Փաստաթղթեր	Խաչաձև հղում այլ ԿՊ-ին	Գործողության հաճախականություն	Պատասխանատվություն	Ստուգման ցուցիչ
LV20 LV21	Շինարարության փուլի ավարտից հետո կիրականացվի հետագա շահագործման փուլում չօգտագործվող բոլոր սարքավորումների, ժամանակավոր կառույցների, շինությունների և այլնի ապամոնտաժում և հեռացում: Շինարարական ողջ թափոնները կհեռացվեն համապատասխան կարգով: Հանքափոսերը, անցքերն ու փորված խրամուղիները կլցափակվեն կուտակված նյութով և անհրաժեշտության դեպքում կտոփանվեն:		Շին.		ՀՈՓՎՆՊ		Բնապահպանության գծով մենեջեր	
LV49 LV50	Լիդիան ընկերությունը ընտրված կապալառուների հետ կմշակի մեթոդական ցուցումներ և աշխատանքների ստանդարտ ընթացակարգեր, որոնք հստակ կնկարագրեն որակավորում ունեցող լանդշաֆտի ճարտարագետի և լանդշաֆտի/բնապահպանական գծով աշխատանքների պատասխանատուի պարտականությունները: Մեթոդական ցուցումները կներառեն հետևյալը՝ ըստ կարգավիճակի պահպանվող տեսակների պահպանումը, գոյություն ունեցող բուսականության կառավարում և պահպանություն, բուսականության և վայրի կենդանիների համար պաշտպանիչ ցանկապատի կառուցում, հողի նախապատրաստում և ճիմի/հողի հեռացում, հողային աշխատանքներ և լանդշաֆտի տարրերի համահարթեցում, տունկի և ցանքի նպատակով հողերի նախապատրաստում և մշակում, սերմանում (ներառյալ՝ ծառերի և թփերի), բնական վերականգնմանը նպաստելը, ծառերի և թփերի տնկում, վերականգնված տարածքների մշտադիտարկում, կառավարում և պահպանում:	Այս կապակցությամբ անհրաժեշտ է նախնական պլանավորում և լանդշաֆտի ճարտարապետի և/կամ աշխատանքների պատասխանատուի ներգրավում: Շինարարական թիմը պետք է ամբողջովին տեղեկացված լինի այս պահանջի մասին:	Նախ.			Ըստ անհրաժեշտության	Բնապահպանության գծով մենեջեր	
LV51	Ծրագրի շինարարության, շահագործման և փակման բոլոր փուլերի ընթացքում կպահանջվի պարբերաբար իրականացնել տեղամասի ստուգումներ՝ երաշխավորելու համապատասխանությունը հանձնարարված մեղմացման և վերականգնման պլանների հետ, ըստ համաձայնեցված ժամանակացույցի, ինչպես նաև կպահանջվեն պարբերաբար ստուգումներ Ծրագրի հետփակման մոնիտորինգի փուլում, երաշխավորելու, որ մեղմացման և վերականգնման անհաջող միջոցառումների դեպքում մշակվել և իրականացվել է որոշակի ուղղիչ գործողություն: Ցանկացած շեղումներ համաձայնեցված մեղմացման և վերականգնման միջոցառումներից կընդգծվեն, և կիրականացվեն ուղղիչ գործողություններ:	Այս կապակցությամբ անհրաժեշտ է նախնական պլանավորում և լանդշաֆտի ճարտարապետի և/կամ աշխատանքների պատասխանատուի ներգրավում: Շինարարական թիմը պետք է ամբողջովին տեղեկացված լինի այս պահանջի մասին:	Նախ., Շին., Շահ., Փակ.			Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	

	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՄԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՀՀ	Լիդիանի փաստաթուղթ#	0-00-PLN-ENV-82110		
		Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան		
Ամսաթիվ՝ մարտ, Մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան		Տարբերակ #	Տարբերակ <b>3</b>	էջ 17

Կոդ	Պարտավորություն/Գործողություն	Մանրամասնում	Ծրագրի փուլ	Փաստաթղթեր	Խաչաձև հղում այլ ԿՊ-ին	Գործողության հաճախականություն	Պատասխանատվություն	Ստուգման ցուցիչ
<b>Ջրհոսքերի կառավարում և էրոզիայի վերահսկում</b>								
BIO29 SL14	Էրոզիայի հավանականությունը նվազեցնելու նպատակով, տեղամասերը կհարթեցվեն այնպես, որ մակերեսային հոսքերը հոսեն ջրահեռացման առուններով՝ հոսքի արագությունը կրճատելու և էրոզիայի հավանականությունը նվազեցնելու նպատակով:		Նախ., Շահ.			Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
ES08	Ծրագիրը կիրականացնի հողի էրոզիայի և սողանքների ռիսկերի կառավարման ռազմավարություն կոնկրետ շահառուների համար:	«Կոնկրետ շահառուները» տեղացի բնակիչներն են, մասնավորապես հովիվները, ովքեր օգտվում են Ծրագրի տեղամասի շրջակա տարածքից:	Նախ., Շին., Շահ., Փակ.			Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
SW01 BIO32 SL11 SL16	Շինարարության ժամանակ նախքան մակերևութային ջրհոսքեր թափվելը հավանական ազդեցություն կրող մակերևութային ջրերը նստվածքների կարգավորման համապատասխան կառույցներով կուղորդվեն դեպի տղմագտիչ ավազաններ: Լավագույն կառավարման լրացուցիչ միջոցներ, այդ թվում՝ տիղմորսիչներ, ծղոտե բլոկներ, կկիրառվեն էրոզիան նվազագույնի հասցնելու համար՝ կրճատելով էրոզիայի և նստվածքազոյացման աղբյուրները:		Նախ., Շին.		ՄՋԿՊ	Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
SW02	Շահագործման ընթացքում հանգույցների, այդ թվում՝ հանքատար ճանապարհների, հանքաքարի փոխակրիչի և ջարդիչների տարածքներից ջրհոսքերը կուղորդվեն դեպի տղմագտիչ ավազաններ՝ մինչև մակերևութային ջրերում դատարկելը:		Նախ., Շահ.		ՄՋԿՊ	Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	

	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՄԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՀՀ	Լիդիանի փաստաթուղթ #	0-00-PLN-ENV-82110	
		Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան	
Ամսաթիվ՝ մարտ, Մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան		Տարբերակ #	Տարբերակ 3 էջ 18

Կոդ	Պարտավորություն/Գործողություն	Մանրամասնում	Ծրագրի փուլ	Փաստաթղթեր	Խաչաձև հղում այլ ԿՊ-ին	Գործողության հաճախականություն	Պատասխանատվություն	Ստուգման ցուցիչ
GW05 SW12	Մակերևութային և ստորերկրյա ջրերի վրա ազդեցությունների մեղմացման նախատեսված միջոցառումները ներառում են շինարարության ընթացքում ջրհոսքերի և արտահոսքերի կառավարումը, վառելիքը/յուղը պահեստավորելու համար բաքի նվազագույնը 110% տարողունակության ապահովում, տիղմի/քսայուղերի որսիչների կիրառում, թափվածքների համար նախատեսված միջոցների տրամադրում և թափվածքների կանխարգելման վերաբերյալ աշխատակիցների և կապալառուների վերապատրաստում: Հանգույցներից և անիվների լվացումից հետո ջրերը չպետք է թափվեն ջրային միջավայր: Կոյուղաջրերը պետք է հավաքվեն հերմետիկ բաքերում և պատշաճ կերպով հեռացվեն: Ավտոմեքենաներն ու սարքավորումները պարբերաբար կստուգվեն ցանկացած հոսակորուստ հայտնաբերելու նպատակով:		Նախ.		ՇՄՊՎՊ	Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
BIO30	Նախատեսվում է ճանապարհների երկայնքով տեղադրել բերմաներ և կառավարել մակերևութային ջրերի հոսքը՝ նվազեցնելու համար լվացված մանրախճի ազդեցության տարածքները, մասնավորապես այն վայրերում, որտեղ բնական բուսականությունը կարող է ենթարկվել ազդեցության:		Նախ., Շին.		ՍՋԿՊ	Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
BIO31	Ջրի հոսանքն ի վար նստվածքները նվազեցնելու նպատակով նախատեսվում է ճանապարհի երկայնքով բոլոր անցումներում տեղադրել դրենաժային խողովակներ:		Նախ., Շին.		ՍՋԿՊ	Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
<b>Կենսամիջավայրերի և կենսաբազմազանության ասպեկտներ</b>								
BIO06	Նախատեսվում է փոքր կաթնասունների, սողունների ու երկկենցաղների բացառում աշխատանքային գոտիներից: Աշխատանքային գոտիների սահմաններում թակարդն ընկած կենդանիների և ազատելու են համապատասխան որակավորում ունեցող էկոլոգները:	Սա հատկապես կարևոր է պահպանվող տեսակների դեպքում	Շին., Շահ.		ԿԿՊ	Ըստ անհրաժեշտության	Բնապահպանության գծով մենեջեր	

	Ծրագրի անվանում՝ ԱՄՈՒԼՄԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ Ծրագրի գտնվելու վայրը՝ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՀՀ	Լիդիանի փաստաթուղթ#	0-00-PLN-ENV-82110	
		Մատակարարի փաստաթուղթ #	Տվյալներ չկան	
Ամսաթիվ՝ մարտ, Մարտ, 2018թ.	Ծրագրի զբաղեցրած տարածքի կառավարման պլան	Տարբերակ #	Տարբերակ 3	Էջ 19

Կոդ	Պարտավորություն/Գործողություն	Մանրամասնում	Ծրագրի փուլ	Փաստաթղթեր	Խաչաձև հղում այլ ԿՊ-ին	Գործողության հաճախականություն	Պատասխանատվություն	Ստուգման ցուցիչ
BIO07	Նախատեսվում է կանխարգելել կենդանիների, այդ թվում՝ թռչունների մուտքը պարզարանների տարածք: Մշտադիտարկման արդյունքում կորոշվի ստանդարտ գործողություններից բացի լրացուցիչ միջոցառումներ (ցանկապատում, թռչուններին վախեցնող գնդակների կիրառում և այլն) իրականացնելու անհրաժեշտությունը:		Նախ., Շին., Շահ.		ԿԿՊ	Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	
BIO15	Արգելված գոտու տարածքում գտնվող ջրային օբյեկտներն ու վայրերը պետք է մաքրվեն աղբից:	Սրա նպատակն է վերացնել Ծրագրի գործողությունների արդյունքում հնարավոր առաջացող (կամ որպես այդիպիսին ընկալվող) աղբից վայրի բնությանը սպառնացող վտանգները:	Շին., Շահ.		ԿԿՊ	Շարունակական մոնիտորինգ	Բնապահպանության գծով մենեջեր	